# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.10.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/38**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի 27.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.09.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել էր հետևյալը.

«ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով ս.թ. հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Գնման առարկա է հանդիսանում ք. Ապարան, Բաղրամյան 43 հասցեի բնակիչների համար բնակելի շենքի կառուցման աշխատանքները: «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն ցանկություն է ունեցել մասնակցելու նշված գնանշմանը և սահմանված կարգով ներկայացրել է հայտ: Մեր ընկերությունը ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ: Այնուհետև գնահատող հանձնաժողովը՝

• 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի 7-րդ տողով որոշել է մերժել մեր կազմակերպության հայտը՝ «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ (ստորագրողի անվանումը,

ժամը չի երեվում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա)» հիմնավորմամբ,

• 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի արձանագրության 4-րդ կետի 1-ին որոշմամբ ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչել «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին,

• 23.09.2017թ. ժամը 11:00-ի գնահատման նիստի N 3 արձանագրության 1-ին կետի 2-րդ որոշմամբ ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչել «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ կետով որոշել է պայմանագիր կնքել հաղթող մասնակիցների հետ,

• 23.09.2017թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի 15-րդ տողով նշել է մեր կազմակերպության հայտի անհամապատասխանությունը հրավերին՝ «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ (ստորագրողի անվանումը, ժամը չի երեվում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա)» հիմնավորմամբ:

Գտնում ենք, որ խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մեր իրավունքները, և հանձնաժողովը մեր կազմակերպության հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ հետևյալ հիմնավորումներով:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, իսկ 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքով սահմանված գործառույթների շրջանակներում հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝հրավերով նախատեսված դեպքում և կարգով հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը)

հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Նույն ենթակետի վերջին նախադասությամբ սահմանվում է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ 5-րդ ենթակետի համաձայն հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հարաբերությունները, 3-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, իսկ 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը, գնումներին մասնակցելիս, իրավունք ունի էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հայտ:

Վերոնշյալ իրավական ակտերում վկայակոչված պահանջներին նույնական պահանջներ են սահմանվել նաև ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման հրավերով, մասնավորապես՝ 4.1-4.3, 8.2, 8.19 և այլ կետերով:

Տվյալ դեպքում մեր ընկերության հայտը մերժվել է «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ (ստորագրողի անվանումը, ժամը չի երևում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա)» հիմնավորմամբ: Նախ ներկայացված ձևակերպմամբ չեն նշվել հայտը մերժելու իրավական և/կամ հրավերով սահմանված հիմքերը: Երկրորդ՝ հստակ չի ձևակերպվել անհամապատասխանության առարկան՝ անհասկանալի է «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ ...»

արտահայտությունը, այնուհետև փակագծերում՝ նշվել է «(ստորագրողի անվանումը, ժամը չի երևվում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա)», ինչն էլ հավանաբար պետք է տեղայնացներ, հստակեցներ «տեսանելի չէ» արտահայտությունը: Մեր համոզմամբ մերժման հիմքը ոչ հստակ սահմանելը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով նման հիմքի բացակայության հետևանք է: Ինչպես պարզեցինք՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրին: Հրավերով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը նախատեսվում է ստորագրել կազմակերպության տնօրենի կողմից, ինչը և կատարվել է, իսկ վճարման պահանջագրի հրավերով ներկայացված ձևի 18.ա. դաշտում, ինչպես նաև հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններով և լրացման կարգով նախատեսված է երկու անձի ստորագրության հնարավորություն, քանի որ վճարման պահանջագիրը պետք է ստորագրեն դրա լիազորությունն ունեցող անձինք: Տվյալ դեպքում վճարման պահանջագիրը մեր ընկերության անունից ստորագրվել է ընկերության տնօրենի և ընկերության հաշվապահի կողմից: Ինչպես հայտին կցված էլեկտրոնային ֆայլում, այնպես էլ դրանից կատարված արտատպման մեջ ակնհայտորեն, պարզորոշ, անհերքելիորեն «տեսանելի» են մեր կողմից կատարված էլեկտրոնային ստորագրությունները: Ընդ որում հարկ ենք համարում նշել, որ ստորագրությունները վավերական են, համապատասխանում են գործող ՀՀ օրենսդրության պահանջներին և չեն վիճարկվել: Հաշվի առնելով, որ ստորագրությունները համընկել են, հնարավոր է, որ դժվար ընթեռնելի են: Այդուհանդերձ ցանկության առկայության դեպքում գնահատող հանձնաժողովը հնարավորություն է ունեցել ոչ միայն տեսնելու, այլև տարանջատելու և ընթերցելու ստորագրությունը, հատկապես հաշվի առնելով, որ տուժանքի համաձայնագրի վրա առկա (տեսանելի) է տնօրենի առանձին էլեկտրոնային ստորագրությունը, սակայն հայտը մերժել ստորագրությունների «անտեսանելի»-ության հիմքով, բացարձակ անհիմն է և անընդունելի: Առաջացած խնդրում ամենևին հակված չենք տեսնելու որևէ միտում, իսկ տեղի ունեցածը կարելի է թերևս վերագրել գնումների մասին ՀՀ նոր օրենսդրության կիրառման ընթացքում հնարավոր վրիպումներին:

Ավելին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Այսինքն ստորագրությունը պետք է լինի տեսանելի, ինչը տվյալ դեպքում ավելի քան անհերքելի է:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ մեր կազմակերպությանը հաղթող ճանաչելու դեպքում պետական բյուջեն կտնտեսի ավելի քան 3 միլիոն դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասին, 3-րդ մասի 1-ին կետին, 50-րդ հոդվածի 1-ին մասին, 2-րդ մասի 1-ին կետին, 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք.

1.Արգելել ՀՀ Արագածոտնի մարզպետարանին ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր,

2.Դադարեցնել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի 7-րդ տողով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին, 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի արձանագրության 4-րդ կետի 1-ին որոշմամբ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին, 23.09.2017թ. ժամը 11:00-ի գնահատման նիստի N 3 արձանագրության 1-ին կետի 2-րդ որոշմամբ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու մասին, նույն արձանագրության 2-րդ կետով հաղթող մասնակիցների հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները, ինչպես նաև 23.09.2017թ. տեղեկագրում հրապարակված՝ ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից և «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող ճանաչելու մասով»:

Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է Խորհրդում բողոքի քննության նպատակով կայանալիք նիստերի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. **<u>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, դիմել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանին (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն Խորհրդին է տրամադրել Բողոքի քննության համար անհրաժեշտ փաստթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից չի ներկայացվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արտյոմ Գևորգյանը և Հակոբ Ստեփանյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2017/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 27.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2, 23.09.2017թ. ժամը 11:00-ի գնահատման նիստի N 3 արձանագրությունները, «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ք. Ապարան, Բաղրամյան 43 հասցեի բնակիչների համար բնակելի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով կազմակերպել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝

• 15.09.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 7-րդ տողով որոշել է մերժել «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը՝ հիմնավորմամբ. «վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ (ստորագրողի անվանումը, ժամը չի երևում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա):»:

• նույն արձանագրության 4-րդ կետի 1-ին որոշմամբ որոշել է «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ճանաչել ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

• 23.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի N 3 արձանագրության 1-ին կետի 2-րդ որոշմամբ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ճանաչել է ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից:

• նույն արձանագրության 2-րդ կետով կայացրել է որոշում՝ հաղթող մասնակիցների հետ պայմանագիր կնքելու մասին:

23.09.2017թ. տեղեկագրում հրապարակվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքերով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից, իսկ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը ճանաչվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտը գնահատվել է անբավարար՝ «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի չէ (ստորագրողի անվանումը, ժամը չի երեվում, ինչը հակասում է հրավերի պահանջներին՝ արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա)» հիմնավորմամբ: Մինչդեռ, Ընկերությունը գտնում է, որ նշված ձևակերպմամբ Պատվիրատուի կողմից չի նշվել հայտը մերժելու իրավական և/կամ հրավերով սահմանված հիմքերը, և հստակ չի ձևակերպվել անհամապատասխանության առարկան: Մասնավորապես, բողոքաբերի համար անհասկանալի է «Վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրությամբ տեսանելի չէ...» ձևակերպումը այն պարագայում, երբ վճարման պահանջագրում ակնհայտորեն տեսանելի է նշված փաստաթուղթը ստորագրելու լիազորություն ունեցող երկու անձանց՝ Ընկերության տնօրենի և հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրությունների առկայությունը: Հետևաբար, ըստ Ընկերության, ստորագրությունների «անտեսանելիության» հիմքով հայտը մերժելու որոշումը անհիմն է և անընդունելի:

Բողոքի քննության նպատակով 03.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված վճարման պահանջագրում էլեկտրոնային թվային ստորագրությունը առկա է և վավեր՝ միաժամանակ նշելով, որ Ընկերության հայտը մերժելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ վերջինիս կողմից ներկայացված վճարման պահանջագրում առկա երկու էլեկտրոնային թվային ստորագրությունները համընկել են միմյանց, ինչը որոշակի դժվարություն է առաջացրել դրանք տարանջատելու և կարդալու հարցում: Արդյունքում, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան՝ Հանձնաժողովը որոշել է «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 34-րդ հոդվածի

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը)

հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Նույն ենթակետի վերջին նախադասությամբ սահմանվում է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

«ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.19 կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից նույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմաններով և լրացման կարգով սահմանվել է, որ այն կարող է ստորագրվել այդ փաստաթուղթն ստորագրելու լիազորություն ունեցող երկու անձանց կողմից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված վճարման պահանջագրի վրա առկա և տեսանելի են Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի էլեկտրոնային թվային ստորագրություններն, ինչը

համապատասխանում է Հրավերի 8.19 կետով, ինչպես նաև վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի «18.ա» կետով նախատեսված պահանջներին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը Ընկերության հայտը մերժել է՝ վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրության արտատպումը տեսանելի չլինելու հիմնավորմամբ:

Հաշվի առնելով, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը պետք է մեկնաբանվի դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի հիմքով՝ վճարման պահանջագրում առկա էլեկտրոնային թվային ստորագրության արտատպումը տեսանելի չլինելու հիմնավորմամբ Ընկերության հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ, այսինքն, Հանձնաժողովի կողմից սխալ է նշվել Ընկերության հայտը մերժելու իրավական հիմքը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 32-րդ կետի 12-րդ, ինչպես նաև Հրավերի 8.19 կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 27.09.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Արգելել ՀՀ Արագածոտնի մարզպետարանին ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր:
3. Դադարեցնել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի 7-րդ տողով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին, 15.09.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի արձանագրության 4-րդ կետի 1-ին որոշմամբ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին, 23.09.2017թ. ժամը 11:00-ի գնահատման նիստի N 3 արձանագրության 1-ին կետի

2-րդ որոշմամբ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու մասին, նույն արձանագրության 2-րդ կետով հաղթող մասնակիցների հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները, ինչպես նաև 23.09.2017թ. տեղեկագրում հրապարակված՝ ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/07 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքերով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ «Մեգապոլիս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից և «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող ճանաչելու մասով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**